

զգրաստ իւր եւ զկարասի ի մանկունս իւր եւ յընկերս, եւ իւր առեալ ի գրաստուց իւրոց գրաստս տոկունս¹ եւ ուժեղս, եւ նմանեալ առն կարաւանի՝ զնայր ընդ ճանապարհ որ երթայր յԱպար աշխարհն, եւ ուղեկցեալ² ճանապարհորդէր ընդ ամբարակապետին ընդ Վեհդենշապիոյ, ցուցանելով նմա, զճանապարհայնն եւ յաւթեանս ուր հանգչէին՝ բազում արթնութեամբ շուտութիւնս. եւ հաճոյ եղեալ Վեհդենշապիոյ ամենայն գործ հպատակութեան հուժկին՝ սիրէր զնա յոյժ եւ խնամարկելով ողջունէր. վասն զի Աստուած էր, որ յաջողէր զիրն:

4 Եւ եղեալ համարձակապէս յընդունելութեան մեծի իշխանին հուժկին՝ հարցանէր³ առ ի սթափելոյ ամբարապետն զհուժկին յաղագս գեղջն նորա եւ ծնողացն, թէ ո՞րպիսիք էին եւ ուստի՝ 5 Եւ հուժկին պատճառադրելով խաւսէր ընդ նմա այլաբանութիւնս, սուտ⁴ պատճառս եւ դիպողս ըստ առաջարկելոյ իրացն գործոցն: 6 «Որդի եղեալ եմ ես, ասէ, ծնողաց աւրինաւորաց, որք ի նախնեաց իւրեանց կրակի եւ արեգական հաւատարմապէս եղեալ են ծառայք, որոց զիս ի նոսա յանձնեալ է ի մանկութենէ իմմէ, եւ նոցա պահպանութեամբն կացեալ եմ ի միջի մինչեւ ցայսաւր եւ կամ, ճանաչելով յայտնապէս յանձին իմում զաստուածոցն աւգնականութիւնս»: 7 Յիշելով երանելոյ հուժկին զպատճառադրութիւնսն վարդապետին հեթանոսաց Պաւլոսի, որ երբեմն հաւատովն փարիսեցի լինէր, եւ դարձեալ այլուր հռոմայեցի. որ ոչ էր յայցանէ ի ժամուն եւ ոչ մի, այլ հաւատովք՝ Աւետարանին քարոզ էր եւ վարդապետ, եւ քաղաքաւ՝ ի Կիւիկեցոց⁵ գաւառէն էր, տարսնացի, մանաւանդ թէ սուրբ եւ հոգեղէն վերին զաւրացն էր դասակից. բայց զմիտս լսողացն առ վայր մի սայթաքեցուցանէր այսր անդր, զի զճշմարտութիւն աճեցուցեալ հաստատեսցէ: 8 Այսպէս եւ երանելի հուժկին պատրողական բանիւք զմիտսն Վեհդենշապիոյ⁶ խնդացուցանէր ի ժամուն, որպէս զի զիր ընթացիցն տենչանս տարեալ ի գլուխ⁷ կատարեսցէ ըստ կամի:

9 Իսկ ամբարապետն Վեհդենշապուհ որպէս թէ յաստուածոց⁸ համարէր զպատահումն նմա հուժկին, տեսանելով զայրն յամենայնի աջողակ⁹, եւ առաւել վարկանէր հաւատարիմ եւ ըմբոն գործոց իրացն՝ յոր երթայր. վասն

1 Զ. տոկուն

2 ԶԱտ. ուղեկցեալ

3 ՏՏ. հուժկին հարցանէր

4 Զ. սուտս

5 ՏՏ. ի Կիւիկեցոց

6 Զ. այստեղ եւ յետոյ՝ Վեհդենշապուհոյ

7 Բտ. արարեալ ի գլուխ

8 ԶԱտ. յաստուածոց

9 ՏՏ. յաջողակ